

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՔԵՅՔԹԱՊՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

1. Անունը, ազգանունը.

Արարատ Սահակյան:

2. Զբաղեցրած պաշտոնը.

«Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի պետ»:

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Հարավաֆրիկյան Հանրապետություն (ք. Քեյփթաուն), 2023թ. նոյեմբերի 6-ից 10-ը:

4. Հրավիրող կողմը.

«Group on Earth Observation» կազմակերպության:

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Geo Week 2023» միջոցառմանը:

6. Քննարկված թեմաները.

Միջոցառման ընթացքում գլխավորապես քննարկվել են հետևյալ թեմաները.

- Երկրի հեռակա դիտարկման տեխնոլոգիաների կիրառությունները բնապահպանության, գյուղատնտեսության ոլորտներում,
- բնական աղետների կանխատեսման մոդելների և վաղ ազդարարման համակարգերի ստեղծումը,
- Երկրի հեռակա դիտարկման տվյալների և դրանցով աշխատելու համար նախատեսված ծրագրային ապահովման ստանդարտացման անհրաժեշտությունն ու խնդիրները,
- «Group on Earth Observation» կազմակերպության կողմից նախորդ տարում արված աշխատանքը, գալիք տարվա և առաջիկա տարիների ռազմավարությունը, առաջնահերթությունները, աշխատանքային ծրագիրը և բյուջեն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման ընթացքում հանդիպում է կայացել «Group on Earth Observation» կազմակերպության քարտուղարության ղեկավար Յանա Գևորգյանի հետ, ում հետ քննարկվել են կազմակերպության և «Հ միջև համագործակցության ընդլայնման հնարավորություններ՝ այդ թվում «Արմսաթ-1» արբանյակի կիրառությունը կազմակերպության և դրա անդամների կողմից կատարվող միջազգային նշանակալի հետազոտություններում:

Միջոցառման շրջականում մասնակցություն է ապահովվել.

- «Group on Earth Observation» կազմակերպության գործադիր հանձնաժողովի նիստին, որի ընթացքում քննարկվել և հաստատվել են կազմակերպության կողմից նախորդ տարի կատարված աշխատանքները, 2024 թվականին կատարվելիք աշխատանքների պլանը և բյուջեն, առաջիկա տարիների ընթացքում կազմակերպության առաջնահերթությունները:
- Պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ կայացած պլենար քննարկումների երկօրյա նիստերին, որոնց շրջանակում քննարկվել է բնական աղետների կանխատեսման մոդելների, բնական աղետների վաղ ազդարարման համակարգերի շարունակական բարելավման կարևորությունը և պլանավորվող միջազգային ծրագրերը, մասնավոր ընկերությունների հետ համագործակցության ընդլայնման տեսլականը, ինչպես նաև միջոցառման շրջանակում հնչեցվելիք նախարարական հայտարարության բովանդակությունը:
- Նախարարական գագթնաժողովին, որի շրջանակում պաշտոնապես հաստատվել է կազմակերպության աշխատանքային ծրագիրը և առաջնահերթությունները:

Միջոցառման շրջանակում քննարկումներ են կայացել արտերկրից երկրի հեռակա դիտարկման ոլորտի մասնագետների հետ, որոնք իրենց փորձով կիսվելու պատրաստակամությունն են հայտնել:

Միջոցառման ընթացքում հանդիպում է կայացել Հարավաֆրիկյան տիեզերական գործակալության նախկին ղեկավար և ներկայումս «Խաղաղօվկիանոսյան համայնք» (SPC) կազմակերպությունում տարածաշրջանայախն տիեզերական ոլորտի մասնավոր

ընկերությունների զարգացման գծով խորհրդական տիկին Անդիսվա Մլիսայի հետ: Վերջինս կիսվել է տիեզերական ոլորտի մասնավոր ընկերությունների խթանման Հարավաֆրիկյան Հանրապետության և ներկա կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության փորձով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատունները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել.

- «Group on Earth Observation» կազմակերպությանը «Արմսաթ-1» արբնայակից ստացված տվյալների նմուշ ներկայացնելու և ՀՀ արքանյակի կարողությունները կազմակերպության և դրա անդամների կողմից իրականացվող հետազոտություններում օգտագործելու հնարավորություններն առավել մանրամասն քննարկելու վերաբերյալ,
- քննարկել ՀՀ-ում 2024 թվականի ընթացքում հանրային ծառայողների և/կամ ոլորտյախն մասնագետների համար երկրի հեռակա դիտարկման տվյալների օգնությամբ կատարվող հետազոտությունների, դրանց կիրառման և ազդեցության թեմաներով աշխատաժողովի կազմակերպումը «Group on Earth Observation» անդամ մասնագետների ներգրավմամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.



ԱՐԱՐԱՏ ՍԱՀԱԿՅԱՆ

15.11.2023թ.